3150

ՀԷՐՎԷ

ՄԱՄ՚ԶԷԼ ՆԻԴՈՒՇ

կամ

ՁԱԼ ԱՂՈՒԵՍ

(Օրէրէք 3 արար եւ 1 պատկեր)

ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԵՐԳԵՐ

Հայացուց՝ ԳՐ. ՍԻՒՆԻ

——«o»——

782.8
Հ-56

1928

Ֆիլատելֆիա

Philadelphia GROONG PUB. CO. New York

782.8
Հ-56

ՀԷՐՎԷ

ՄԱՄ'ԶԷԼ ՆԻԴՈՒՇ

կամ

ՁԱԼ ԱՂՈՒԵՍ

(Օբէրէթ 3 արար եւ 1 պատկեր)

ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԵՐԳԵՐ

Հայացուց՝ Գր. ՍԻՒՆԻ

——«o»——

2003

1928

Ֆիլատելֆիա

2011

Ամէն իրաւունք վերապահուած է թարգմանչին

Ա. ԱՐԱՐ

«o»

Երգ Ա.

ՖԼՕՐԻՏՕՐ

Իմ մի անուանս է Ֆլորիտոր,
Այստեղ գիտեն ինձ Սելէսթին.
Ճիշտ որ օյին է Ֆլորիտոր —
Բայց մեծ բան է հա՜ Սելէսթին:
Թէ որ տեսնէէ Ֆլորիտորին,
Կամ հանդիպէէ Սելէսթինին,
Կը շրջթէէ դուք երկուսին —
Ֆլորիտորն է թէ Սելէսթին:
Բայց Սելէսթին չէ Ֆլորիտոր,
Ճիշտ Ֆլորիտորն էլ Սելէսթին:

Այ, Ֆլորիտորը բեզ տարբեր,
Կենցաղ ունի Սելէսթինից,
Սիրում է նա գեղ աղջիկներ,
Իսկ ես հեռու այդ փեշերից:
Թէ նա խոշոր պատառ գրտնի,
Համով թիթէն միշտ ինձ կընկնի,
Թող Կորինին նա միշտ սիրի,
Իսկ Սելէսթին միշտ խոնարհի:
Ո՜ւֆ, մեր գործերն են միշտ օյին,
Մեռնիմ օյինբազի բոյին:

Երգ Բ.

ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐՈՒ ԽՈՒՄԲ

Այս սուրբ տաճարում,
Շտապ գործից գալով,
Հանգիստ ենք առնում,
Վեհ երգ երգելով:
Շտապ գործից գալով,
Վեհ երգ երգելով,
Այս սուրբ տաճարում,
Հանգիստ ենք առնում:

ՏԷՆԻԶԱ

Ո՜հ, ինչպէս ուրախ զուարթ,
Այս վեհ կամարի մենք տակ,
Կոյս յստակ սուրբ երգերում,
Երկինք ենք համբառնում:
Երանի ենք մենք տալիս,
Ժամերն այդ պանծալի,
Ո՜հ, ինչպէս սիրտն է հրնչում,
Երգեհոնն է երբ հընչում:
Այս վայրն է սուրբ ապաստան,
Պահապան մեզ ու պաշտպան,
Միշտ վեհ վսեմ,
Սուրբ դրախտ եղեմ:

ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐՈՒ ԽՈՒՄԲ

Այս վայրն է սուրբ ապաստան,
Պահապան մեզ ու պաշտպան,
Միշտ վեհ վսեմ,
Սուրբ դրախտ եղեմ:

ՏԷՆԻԶԱ

Մեր բնակավայրում, գիտէք,
Այր մարդ մուտք չունի երբէք,
Մենք չարից հեռու ենք միշտ.
Եւ ուրախ, հանգիստ, անվիշտ:
Այս աշխարհն իւր մեղքերով,
Փուչ, թեթեւ, սեւ կռղմերով,
Միշտ եղել է հալածուած,
Մեր օրէնքներից ատուած:
Այս վայրն է սուրբ ապաստան,
Պահապան մեզ ու պաշտպան,
Միշտ վեհ, վսեմ,
Սուրբ դրախտ եղեմ:

ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐՈՒ ԽՈՒՄԲ

Այս վայրն է սուրբ ապաստան,
Պահապան մեզ ու պաշտպան,
Միշտ վեհ, վսեմ,
Սուրբ դրախտ եղեմ:

ԵՐԳ Դ.

ՏԷՆԻԶԱ

Նա գրենադեր էր քաջ սիրուն,
Հէնց Նիւրենբերգ քաղքից եկած.

ՖԼՕՐԻՏՕՐ

Իսկ պրենսուիին ունէր անուն,
Հռչակ ամէն տեղ տարածած:

ՏԷՆԻԶԱ

Յանկարծ սաստիկ հուր սէր վառուեց.
Հէնց որ իրար հանդէպ բերուեց.

ՖԼՕՐԻՏՕՐ

Սիրող սրտի լեզուն բացուեց,
Եւ տաք ճառեր շուտ դուրս յեղուեց:

ՏԷՆԻԶԱ

Քաջ զինուորի պինդ երեսի,
Ոչ մի գծով դող չանցաւ,
Նա արձագանգ իսկ չը տուաւ.

ՖԼՕՐԻՏՕՐ

Ճիշտ քարացաւ:

ՏԷՆԻԶԱ ԵՒ ՖԼՕՐԻՏՕՐ

Ճիշտ նրա համար,
Ճիշտ նրա համար,
Որ կապարից էր նա շինուած,
Ճիշտ նրա համար, որ կապարից
Հերոսն էր այն ձուլուած... չխ...
Միաու, միաու, միաու... չխ...
Հազուագիւտ զինուոր էր զուտ,
Հազուագիւտ զինուոր էր զուտ,
Տրա, տա, տա, տա, տա, տա, տատա...:
Նա դաժան է, բայց լոքի,
Մարդ որ ինչքան էլ բոքի,
Չի ցնցուի անօքի,
Կամ առանց ամօքի:

ՏԷՆԻԶԱ

Խեղճ պրենսուիին մեծ ցաւ ըզգաց,
Որ կամակոր էր առարկան,

ՖԼՕՐԻՏՕՐ

Ցըգուել մնացել էր քար կըտրած,
Որպէս մի ցից զինուոր հրսկան:

ՏԷՆԻԶԱ

Ուստի եւ նա անյոյս մնացած,
Վերցրեց գրկում նրան պինդ սեղմեց,

ՖԼՕՐԻՏՕՐ

Ու ջերմ տաք տաք համբույր բաշխեց
Կըրքոտ կրակով նորան վառեց:

ՏԷՆԻԶԱ

Մի շատ դժբաղդ բան պատահեց,
Հարսանիքին էլ չ'սպասեց·
Նա հէնց մէկէն ճիշտ հալուեց·

ՖԼՕՐԻՏՕՐ

Վա՜յ ճիշտ հալուեց:

ՏԷՆԻԶԱ ԵՒ ՖԼՕՐԻՏՕՐ

Ճիշտ նրա համար,
Ճիշտ նրա համար,
Որ կապարից էր նա շինուած,
Ճիշտ նրա համար, որ կապարից
Հերոսն էր այն ձուլուած··· չխ···
Միաու, միաու, միաու··· չխ···
Տրա, տա, տա, տա, տա, տա, տատա···:

Նա դաժան է, բայց լօքի,
Մարդ որ ինչքան էլ բոքի,
Չի ցնցուի անօքի,
Կամ առանց ամօքի:

Երգ Ե·

ՇԱՄԲԼԱԹՐՕ

Իմ տուրբ հրեշտակ, բարի տեսանիք,
Ես լաւ գիտեմ, մի վախենամ,
Որ լաւ վարքի այս սուրբ վայրում,
Մուտքն այր մարդկանց է արգելուում···:
Բայց ես ծերուկ եմ ալեզարդ,
Տարիքս առել եմ հանդարտ·
Չէք լսի դուք վատ խօսք ինձնից,
Ինձ նման մեծ պրոֆէսօրից,
Ինձ նման մեծ պրոֆէսօրից:
Վարք ու բարքի լաւ հետեւող,
Ես կրքուքեան եմ խիստ նայող,
Յանձնարարում են ձեզ այստեղ,
Երբ օրինակ ինձ լաւ ու գեղ:
Դարգ ու կանոն չեմ խանգարի,
Դուք համեստ էք ու բարի·
Լաւ գիտցէք, որ չէք կարմրի,
Թէ խօսէք հետ պրոֆէսօրի,
Ինձ նման մեծ պրոֆէսօրին:

Երգ Զ·

ՏԷՆԻԶԱ

Վաստակն է սուրբ հանոյք բերում,

Սրտին բերկրանք, խնդում, բաշխում,
Հոգով երկինք ես միշտ սլանում,
Մեղուի թեւով դէպ վեր սահում:
Պայծառ յստակ է քո հոգին,
Մաքուր ու պարզ ձգտումդ անգին.
Ա՛խ, իմ հոգին է սէր փընտռում,
Անհուն սիրոյ ծարաւ քաշում:

Փառք եւ պարծանք նրան,
Որ կեանքն է երգում, ով գեղ երգերով.
Միշտ նրան զարդարում,
Ո՛հ, մեր երգերում
Կան ցնորք երազուն,
Գեղ, դիւթիչ հընչիւն,
Հընչեանք միշտ անհուն, անհուն:

Վաստակն է սուրբ հանոյք բերում,
Սրտին բերկրանք, խնդում, բաշխում՝
Հոգով երկինք ես սլանում.
Մեղուի թեւով դէպ վեր սահում:
Պայծառ յստակ է քո հոգին,
Մաքուր անբիծ ձգտումդ անգին,
Ա՛խ, իմ հոգին է սէր փնտռում,
Անհուն սիրոյ ծարաւ քաշում,
Անհուն, անվերջ կարօտ քաշում:

Երգ է. ա. և բ.

ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐՈՒ ԽՈՒՄԲ

Տէնիզա, դու սիրուն էակ,
Պարծանքն ես մեր դու առաջին,
Թողնում ես երբ դու մեզ միանակ.
Սրգտոր պիտ մնանք, քոյր անգին,
Սրգտոր պիտ մնանք քոյր անգին:

ՏԷՆԻԶԱ

Շատ ծանր է ինձ ձեզնից զատուել.
Անոյշ քոյրեր, իմ ընկերներ,
Գերդաստանիս հրամանն եմ ես
Արդ կատարում ու ձեզ թողնում:
Շատերը հէնց այդպէս կուզեն,
Գուցէ եւ շատ ուրախ լինեն,
Որ այս բանտէն պիտի ելնեն.
Բայց ես զոհ եմ իմ անցեալէն,
Թող իմ աչեր արցունք թափեն:

ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐՈՒ ԽՈՒՄԲ
Բայց այդ ինչո՞ւ.

ՏԷՆԻԶԱ

Ճիշտ նրա համար
Ճիշտ նրա համար

ՖԼՈՐԻՏՈՐ

Սու՛ս, յիմար, ա՜յ տխմար։

ՏԷՆԻԶԱ

Ես տիրոջ ուղին եմ բռնել, բռնել,
Ու կեանքի համար չեմ ծռնուել,
Ճիշտը կասեմ, կը կրկնեմ, կը կրկնեմ—
Որ կեանքը միշտ կ'ատեմ։

ՖԼՈՐԻՏՈՐ

Ես համաձայն չեմ երբէք, ո՜հ երբէք,
Որ կեանքը դուք կատէք։

ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐՈՒ ԽՈՒՄԲ

Ո՜հ, որքան տխուր է,

ՏԷՆԻԶԱ

Հոս ապրելու կոչումս ունեմ։
Շատերն են հոս արցունք թափում,
Հոգու խորքում ինձ նախանձում,
Որ ես պիտի ուրախ ապրիմ,
Խընդում ու կեանք արդ վայելեմ։
Դատրոն ու պար, ժողովարան,
Մի օր, մի ժամ, կամ մի վայրկեան

Տեսնել ձեզնից ով չի տենչում
Անձանկալի մեղքեր նման
Իմ մէջ երբէք ես չեմ սնել։

ԽՈՒՄԲ

Բայց այդ ինչո՞ւ...

ՏԷՆԻԶԱ

Ճիշտ նրա համար
Ճիշտ նրա համար

ՖԼՈՐԻՏՈՐ

Սու՛ս, յիմար, ա՜յ տխմար։

ՏԷՆԻԶԱ

Ես տիրոջ ուղին եմ բռնել, բռնել,
Ու կեանքի համար չեմ ծռնուել, ծռնուել։
Ու կասեմ, ճիշտ կասեմ, կը կրկնեմ,
Որ կեանքը միշտ կ'ատեմ։

ՖԼՈՐԻՏՈՐ

Ես համաձայն չեմ երբէք, ո՜հ, երբէք,
Որ կեանքը դուք կ'ատէք, կ'ատէք։

ԽՈՒՄԲ

Ո՜հ, որքան տխուր է նա,

ՏԵՍՉՈՒՀԻՆ

Շատ ճիշտ է նա,
Մեծ վիշտ է նա:

ԽՈՒՄԲ

Հեռու ճամբիդ օրհնում ենք մենք,
Արդէն ժամ է, շուտով մեկնենք,
Ժամ է, ժամ է, դէ շուտ շտապենք,
Գուցէ նորից իրար տեսնենք:
Հեռու ճամբիդ օրհնում ենք մենք,
Արդէն ժամ է շուտով մեկնենք.
Ժամ է, ժամ է, շուտով շտապենք,
Գուցէ, ով գիտէ, եւ մենք մի օր իրար տեսնենք:
Քո ճամբիդ օրհնում ենք մենք,
Հեռանաս պիտ' լաւ գիտենք.
Բայց գուցէ նորից տեսնուենք,
Կեանքն իրար հետ վայելենք:
Սէր մեր յաւէտ, Աստուած քեզ հետ,
Աստուած քեզ հետ:

Վերջ Ա. Արարի երգերու

——«o»——

Բ. ԱՐԱՐ

——«o»——

Երգ Ը.

ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ԽՈՒՄԲ

Եկէք, երգենք, խրմենք,
Հարսնիքն է, քէյֆ անենք.
Նա չի դառնայ գիտենք,
Բայց պիտ' նորան սիրենք.
Ուրախ լինենք, խրմենք, խրմենք:

Երգ Թ.

ՇԱՄԲԼԱԹՐՕ

Այդպէս դէպքեր շատ հազուագիւտ են,
Ո՛հ, ես ոչինչ դեռ չը գիտեմ.
Արդեօ՞ք խարտեաշ է թէ բրունէտ.
Հասակը նոյն իսկ չը գիտեմ:
Թէ գեղեցիկ է նա քայլում,
Կամ թռչկոտում է այծօրէն,
Ինձ չէ հետաքրքրում,
Պրսակւում եմ ես կուրօրէն:

ԽՈՒՄԲ

Պրսակւում է նա կուրօրէն.

ՇԱՄԲԼԱԹՐՈ

Այո՛, կուրօրէն:

Օ՛... նշանածները յանախ,
Աչք իրարից չեն հեռացնում.
Հազիւ տարին անցնում, աւա՜ղ,
Իսկոյն կռուել են սկսում...:
Ես այդ մասին հոգ չեմ անում,
Ինձ հուր, կայծակ չէ սարսեցնում,
Մեր կապն է շատ ամուր.
Զէ՞ որ ես կապւում եմ կոյր ի կոյր:

ԽՈՒՄԲ

Զէ՞ որ նա կապւում է կոյր ի կոյր.

ՇԱՄԲԼԱԹՐՈ

Այո՛, կոյր ի կոյր:

Երգ Ժ.

ՏԷՆԻԶԱ

Մեզ մօտ կար կառք կանգնած,
Ե՛կ, շու՛տ, ըսի անկարծ,
Թատրոն տար, շուտ, անհարց, անհարց.
Եկանք. հազիւ շնչում,
Սիրտս է բաբախում,
Դիշերէն եմ բայց վազում, վազում:

—Խնդրեմ, մի տոմս տուէ՛ք,
—Հինգ ֆրանք տալ հանեցէք.
—Դէ՛, լաւ, խնդրեմ, տուէ՛ք:
Գիտէ՞ք, Աստուած վկայ,
Թէ նէսրը ծակ գտայ,
Թէեւ մի սէնթ չը կար,
Բայց այդ ով ցոյց կուտար, կուտար:
Հոն մի պարոն յանկարծ
Ինձ շատ կամաց ասաց.
—Դուք դրամն էք ձեր մոռցած, մոռցած,
Ինձ թոյլ տուէք վճարեմ,
Մի տոմսակ առնեմ.
Զեզ ընկեր լինեմ, լինեմ:
Իսկոյն փախայ նանկից,
Նա պակ չեկաւ ինձնից,
Բան դուրս չեկաւ ադկից:
Աստուած իմ, ի՞նչ անեմ,
Ինչպէս ես ազատուեմ,
Փախայ իսկոյն, հարկաւ,
Բայց նա ինձ հետ եկաւ, եկաւ:
Վեր վար սանդուխներով,
Վազում ենք հեւալով,
Պրծնել լոկ չանալով, գոռալ...:

1015-14

Հազիւ գտայ մի դուռ,
Ճրչալ սկսայ ամուր.

Հէ՛յ, ու՞ր ես Ֆլորիտոր, հէ՛յ, ու՞ր ես, ու՞ր:
Ցանկաւծ փրկչի նման,
Ջիտեմ երազ էր ան,
Թէ ճիշտ իրօք մի բան, մի բան.

Մի ձայն սկսեց կանչել,
Թէ որ կուզէք գտնել.
Պիտի հէնց աջ ծրուել, ծրուել:

Այսպէս ազատ եղայ,
Այսպէս հանգիստ գտայ.
Ինչ որ էլ եղաւ, եղաւ, վրաս շատ սուղ նստաւ,
Անվրտանգ անցաւ, ուրախ, լաւ վերջ գտաւ:

ԵՐԳ ԺԱ.

ՏԷՆԻԶԱ

Գիշերով, ուշ անտառով,
Սուս կանցնէին Բաբէն, Կադէն:

—Ո՛հ, սարսափն է ինձ առել,
Շըշընչաց Կադէն մէկէն:

—Մի սարսիր մուրէն դու իմ սէր.
Այստեղ դնենք բազում կէտեր...:

—Վախ կըզգամ, ասաց Կադէն,

—Իսկ ես, ո՛չ, ասաց Բաբէն:

Ա՛յ զարմանք բան, ա՛յ զարմանք...
Համ զարմանք, համ էլ փորձանք:
Անտառէն Կադէն վազքով,
Հասաւ իւր դրան հեւալով,
Իսկ Բաբէն հանգիստ սրտով՝
Գեղ ծաղկանց փունջ քաղելով,
Թրռվըռում, ցատկում էր վեր, վեր,
Այստեղ դընենք բազմակէտեր...:
Իսկ սիրեց միանակ Բաբէն...:
Անտառէն խորշեց Կադէն,
Ա՛յ, զարմանք բան, ա՛յ, զարմանք,
Համ զարմանք, համ էլ փորձանք:

Երգ ԺԲ. պիս

ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ԽՈՒՄԲ

Մենք փափաք միշտ ունինք,
Որ նորան մօտ լինինք,
Ո՞վ է այն, որ չի ուզի
Նորան եղբայր կամ քոյր լինի:

ՏԷՆԻԶԱ

Բայց խնդիրն ի կատար ածել
Պիտ' զարմանքի նշան դնել, նշան դնել...
Մարդ կայ, տէրտէր կը սիրէ
Մարդ էլ կայ, որ տիրուհի...:

Վերջ Բ. Արարի երգերուն

Գ. ԱՐԱՐ

(Ա. Պատկեր)

—«o»—

Երգ ԺԴ.

ԼՕՐԻՕ

Ծնուել եմ ես ծառոտ մի տեղ,
Կոչէք մի կերպ այն վայրը գեղ,
Փառքի թուփեր են հոն շինում
Եւ ժպտուէն սիրոյ հիւսում:

Մանուկ օրից մամաս կուզէր,
Որ ինձ ջուլհակ դարձած տեսնէր,
Իսկ հայրս էր կարծես ուխտած,
Ինձ միշտ կուզէր թոփչի շինել;

Կոյր բաղդը մօրս ականջ չարեց, հօրըս լսեց,
Ուստի եւ ինձ աղքատ թողեց, անզէն մորքեց:

Այրի մի կին ծանօթ էր ինձ,
Սիրուն էր նա եւ փող ունէր,
Տածում էր նա դէպ ինձ քիչ սէր,
Մի օր ասաց ինձ այս խօսքեր.

—«Ես շատ կուզեմ դրագուն առնեմ»։
Հէնց նրա համար դրագուն եղայ։
Բայց երբ յետոյ ես տուն դարձայ,
Նորա ամուսնացած գտայ։

Կոյր բաղդը մօրս ականջ չարեց, հօրըս լսեց,
Ուստի եւ ինձ աղէտ թողեց, անզէն մորթեց։

Երգ ժե։

ՏԷՆԻԶԱ

Ես ինչ պիտ կորցնեմ թէ մնամ,
Ով տէր Աստուած, այստեղ մի ժամ։

ՖԼՕՐԻՏՕՐ

Ես կարգ կանոն շատ եմ սիրում,
Ուստի եւ խիստ եմ բողոքում։
Իսկ թէ ընթրիքն այս ընդունեմ,
Ես ստոր ու լիրբ մարդ պիտ լինեմ։
Աստծս է նիշտ, կասեմ ես միշտ։

ՏԷՆԻԶԱ

Ֆլորիտորը կասէ միշտ նիշտ։

ՖԼՕՐԻՏՕՐ

Այո՛, կասեմ ես նիշտը միշտ։
Ֆլորիտորը կասէ միշտ նիշտ։

ՏԷՆԻԶԱ

Դարձանք ժանդարմ, Աստուած վկայ,
Այստեղ ոչինչ վատ բան չկայ։

ՖԼՕՐԻՏՕՐ

Ապրած տան մէջ հեծեալ զօրքի,
Ձահէլ աղջիկն ի՞նչ գործ ունի:
Վայել չէ քեզ, հասկաց, աղջիկ,
Եւ զուր երբէք մի վիճի:
Ասածս է ճիշտ, կասեմ ես միշտ.

ԽՈՒՄԲ

Ֆլօրիտօրը կասէ միշտ ճիշտ:

ՖԼՕՐԻՏՕՐ

Այո՛, կասեմ ես ճիշտը միշտ.

ԽՈՒՄԲ

Ֆլօրիտօրը կասէ միշտ ճիշտ:

Երգ ԺԷ.

ՏԷՆԻԶԱ

Գնդի եղած հէնց տան մօտէն
Անցնում էին երաժիշտներ,
Մի զեղուհի ուղղեց մէկէն
Հայեացքը իւր լեցուն հուր սէր:
Նրան հրճուանք էր պատճառում,
Նրանց տեսքը ամէն քայլում.
Թմբուկ զարնողն էր խանգարում,
Ամէն անգամ մի քիչ կաղում:
Թմբկի հէնց բնոյթն է միշտ այնպէս.
Հազիւ թէ նրան խելքի բերես,
Դրմ... Այնուհանդերձ թմբկահարն այդ
Ցրմ... Հէնց տուաւ խոշոր տաղանդ:
—Զրնգ, զրնգ, այնպէս մի ձայն
Կուտան նորա զանգուլակներ,
Որ կը մնաս մայիլ կտրած.
Կրզգաս հրճուանք եւ քէյֆ, սէր:—

ԽՈՒՄԲ

—Զրնգ, զրնգ, այնպէս մի ձայն
Կուտան նորա զանգուլակներ,
Որ կը մնաս մայիլ կտրած.

Կըզգաս հրճուանք եւ քէյֆ, սէր։—

ՏԷՆԻԶԱ

Երբ վճռեցին, որ կէս ժամով
Ազատ թողնեն ածողներին,
Նորանք աղջկան մէջ առնելով·
Նորան քըսուել շատ ջանացին։
Որպէս մի լաւ մարդ աշխարհիկ,
Հետեւելով հէնց իւր գնդին,
Թմբուկ զարնողն էլ լուռ մընջիկ՝
Եկաւ կանգնեց աղջկայ կողքին։
Եւ ի՞նչ տեսա՛ւ, տիկինն էր իւր,
Ընկել էր, վա՛հ, օտար տեղ հիւր,
Դըմ··· Այնուհանդերձ թմբկահարն այդ
Ցըմ··· Հէնց տուաւ խոշոր տաղանդ։
—Զընգ, զընգ, այնպէս մի ձայն
Կուտան նորա զանգուլակներ,
Որ կը մնաս մայիլ կտրած·
Կըզգաս հրճուանք եւ քէյֆ, սէր։—

ԽՈՒՄԲ

—Զընգ, զընգ, այնպէս մի ձայն
Կուտան նորա զանգուլակներ,
Որ կը մնաս մայիլ կտրած·
Կըզգաս հրճուանք եւ քէյֆ, սէր։—

Գ. ԱՐԱՐ

(Բ. Պատկեր)

—«o»—

ԵՐԳ ԻԱ.

ՏԷՆԻԶԱ

Կատակն ինձի իւր ձեռքն առաւ,
Եւ շատ հեռո՛ւ, հեռո՛ւ տարաւ·
Դարձայ յանկարծ ես չալ աղուես,
Բայց չեմ կըրկնի, կասեմ ես ձեզ։

Օ՛, ինձ օգնիր իմ խելք դըժխեմ,
Որ ես ստեղծեմ նոր կեանք վըսեմ,
Էլ չեմ անի նման քայլեր,
Միշտ պիտ սիրեմ համեստ լինել։

Ինձ կսպառնար մեծ վիհն անտակ,
Ուր ինձ մղել էր իմ վինակ·
Խոստովանում եմ իմ յանցանք,
Մեծ փորձուքիւն էր, բայց անցաւ։

Օ՛, ինձ օգնիր իմ խելք դըժխեմ,
Որ ես ստեղծեմ նոր կեանք վըսեմ,
Էլ չեմ անի նման քայլեր,
Միշտ պիտ սիրեմ համեստ լինել։

Երգ Իբ.

ՏԷՆԻԶԱ

Շատ են ձեզ մօտ ինձ գովել,
Հոս ամէնքն են ինձ սիրել:

ՇԱՄԲԼԱԹՐՕ

Այդ ամէնը իմ հոգում
Ծիծաղ է յառաջ բերում:

ՏԷՆԻԶԱ

Ինչ որ կասեն չը գիտեն,
Ցանցանքներս շատ շատ են:
Երէկ մի բան ես արի,
Որ թէ լինի ձեզ յայտնի՝
Պիտի գոչէք, անպատճառ.
«Ոնրագործ ես դու թշուառ»:

ՇԱՄԲԼԱԹՐՕ

Անկարելի է մեղք գործէք,
Բանի այսպէս մի տեղ կապրէք:

ՏԷՆԻԶԱ

Մի օր գացի թատրոն,
Տեսայ լաւիկ մը հոն,

Այստեղ դընենք կէտ, կէտ.
Լրենք, մոռնանք յաւէտ:
Զը գիտեմ ինչպէս եղաւ
Հոգիս կրպաւ նորան:

ՇԱՄԲԼԱԹՐՕ

Օ՛, տէր Աստուած, բարէտա.

ՏԷՆԻԶԱ

Մեծ զարմանք, փորձանք է դա:

ՇԱՄԲԼԱԹՐՕ

Աստուած վրկայ
Ես խենթացայ:

ՏԷՆԻԶԱ

Բերանը բաց մի քիչ խերով,
Թէ չէ, կերբամ ես վազելով:

Սիրուց մղուած հետեւեցի,
Մինչ զօրանոց անգամ գացի.
Մի լաւ գինի հոն խմեցի:

Զընգ, զընգ, նրա ձեռքում,
Զանգակն է գեղ զընգզընգում,

Լաւ է, քաղցր է, միշտ հնչում,
Մարդու հոգուց խօսում:

ՇԱՄԲԼԱԹՐՕ

Տեսնել ձեզ հետ շատ կուզէի.

ՏԷՆԻԶԱ

Չի կարելի:

Ամէն ինչ այժմ ես պատմեցի.
Անկեղծ, ազնիւ ի յայտ բերի,
Դուք ինձ հիմա կրնաք կախէք.
Բայց կաղաչեմ այս կողմ չանցնէք:

ՇԱՄԲԼԱԹՐՕ

Պիտի նորան ընդ միշտ թալել:
Բաղդի հետ գործ չունեմ,
Դու իմն ես, ես կասեմ,
Սիրում եմ քեզ պաշտում,
Ես այդ միայն գիտեմ:

ՏԷՆԻԶԱ

Գուցէ հալւեմ, մաշւեմ,
Բերկրանքս խիստ պահեմ,
Ահա ինչ որ գիտեմ:
Թէեւ անվերջ սիրեմ.

ՇԱՄԲԼԱԹՐՕ

Բաղդի հետ գործ չունեմ,
Դու իմն ես, ես կասեմ,
Միշտ պիտ սիրեմ պաշտեմ,
Ահա ինչ որ գիտեմ:

ՎԵՐՋ

3150

0011931

2013

ՀՀ Ազգային գրադարան

NL0011931

ԳԻՆ 25 ՍԷՆԹ

Մեծաքանակ գնողներու Մասնաւոր զեղչ։

Դիմել Հրատարակչին հետեւեալ հասցէով

HRACH YOUSOUFIAN

232 So. 60th St.

Philadelphia, Pa.